ՄՈՍԿՎԱ

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, ՊՐԵԶԻԴԵՆՏ ՎԼԱԴԻՄԻՐ ԼԵՈՆՏԵՎԻՉ ԿՈՄԱՐՈՎԻՆ

*Թանկագին Վլադիմիր Լեոնտևիչ.*

*Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի հանդիսավոր բացման բերկրալի օրը Ձեզ, մեր երկրի ականավոր գիտնականին, ՍՍՌՄ գիտական մտքի շտաբի ղեկավարին, հղում ենք մեր սրտագին ողջույնը։*

*Իրականացնելով* Լենինի-Ստալինի *ազգային իմաստուն քաղաքականությունը, Դուք, Թանկագին Վլադիմիր Լեոնտևիչ, մեծ ու շնորհակալ աշխատանք եք ծավալել գիտական նոր կենտրոններ կազմակերպելու ուղղությամբ։ Ձեր անմիջական ղեկավարությամբ են կազմակերպվել ֆիլիալներն ու բազաները ազգային ռեսպուբլիկաներում ու մարզերում։ Ձեր հմուտ ղեկավարության շնորհիվ նրանք դարձել են գիտության և կուլտուրայի զարգացման խոշոր օջախներ։*

*Վլադիմիր Լեոնտևիչ. Հայկական Ֆիլիալը ևս Ձեր և Ձեր ղեկավարած՝ ՍՍՌՄ Գիտությունների ամբողջ Ակադեմիայի հոգատարության առարկան էր։ Նա գիտական մտքի կենտրոն է դարձել մեր ռեսպուբլիկայում, նա համախմբել է Հայկական ՍՍՌ լավագույն գիտնականներին, որոնց մեջ քիչ չեն Ձեր աշակերտներն ու հետևորդները։*

*Թանկագին Վլադիմիր Լեոնտևիչ. Սովետական Հայաստանում Գիտությունների Ակադեմիա կազմակերպելը մեծ պատիվ և մեծ վստահության վկայական է նրա գիտնականների համար։ Մենք անդուլ կաշխատենք այդ վստահությունը արդարացնելու համար։ Մենք ամեն ջանք կգործադրենք գիտության ծաղկման համար, որին Դուք նվիրել եք Ձեր ամբողջ կյանքը։ Ձեզ և ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի հետ միասին մենք ամբողջ ուժով կօգնենք Հայրենիքին գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ նրա կողմից մղվող հերոսական պայքարում։*

*Թանկագին Վլադիմիր Լեոնտևիչ. մենք խորապես գիտակցում ենք, որ Սովետական Հայաստանում գիտական մտքի արդյունավետ զարգացման նախադրյալներից մեկը կլինի մեր երիտասարդ Ակադեմիայի սերտ կապը Ձեր գլխավորած՝ ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի՝ որպես սովետական առաջավոր գիտության ուղեղի հետ։ Մենք լիակատար վստահությամբ հույս ունենք Ձեր ուշադրության և Ձեր օժանդակության։*

*Մենք անսահմանորեն ուրախ ենք հաղորդելու Ձեզ, Թանկագին Վլադիմիր Լեոնտևիչ, որ մեր առաջին ընդհանուր ժողովը Ձեզ, սովետական*

*խոշոր գիտնականից, Մեչնիկովի և Սեչենովի, Յաբլոչկովի և Տիմիրյազևի, Կարպինսկու և Պավլովի հիանալի տրադիցիաները շարունակողից, միաձայն ընտրեց Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ։*

*Ընդունեցեք, Վլադիմիր Լեոնտևիչ, մեր սրտագին և խորին շնորհակալությունը։ Ցանկանում ենք Ձեզ արդյունավետ աշխատանքի երկար տարիներ ի բարօրություն մեր սիրելի Սովետական Հայրենիքի, ի ծաղկումն սովետական առաջավոր գիտության։*

*Ընդունված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բացմանը նվիրված հանդիսավոր նիստում, 1943 թ. նոյեմբերի 29-ին։*

**МОСКВА.**

## АКАДЕМИЯ НАУК СОЮЗА СОВЕТСКИХ СОЦИАЛИСТИЧЕСКИХ РЕСПУБЛИК, ПРЕЗИДЕНТУ ВЛАДИМИРУ ЛЕОНТЬЕВИЧУ КОМАРОВУ

*Дорогой Владимир Леонтьевич!*

В радостный день торжественного открытия Академии наук Армянской Советской Социалистической Республики шлем Вам, выдающемуся ученому нашей страны, руководителю штаба научной мысли СССР, наш сердечный привет.

Осуществляя мудрую национальную политику Ленина—Сталина, Вы, дорогой Владимир Леонтьевич, развернули большую и благодарную работу по организации новых научных центров. Под вашим непосредственным руководством были организованы филиалы и базы в национальных республиках и областях. Благодаря Вашему умелому руководству они становились подлинными очагами развития науки и культуры.

*Владимир Леонтьевич!* Армянский филиал также был предметом забот Ваших и всей Вами руководимой Академии наук СССР. Он стал центром научной мысли в нашей республике, он сплотил лучших ученых Армянской ССР, среди которых немало Ваших учеников и последователей.

*Дорогой Владимир Леонтьевич!* Образование Академии наук в Советской Армении—великая честь для ее ученых и свидетельство большого доверия. Мы будем неустанно трудиться для оправдания этого доверия. Мы приложим все усилия для процветания науки. которой Вы посвятили всю Вашу жизнь. Вместе с Вами и Академией наук Союза ССР мы будем всеми силами помогать родине в ее героической борьбе против немецко-фашистских захватчиков.

*Дорогой Владимир Леонтьевич!* Мы глубоко сознаем, что одной из предпосылок плодотворного развития научной мысли в Советской Армении будет являться тесная связь нашей молодой Академии с возглавляемой Вами Академией наук Союза ССР, как мозгом передовой советской науки. Мы с полной уверенностью рассчитываем на Ваше внимание и Вашу поддержку.

Мы безгранично рады сообщить Вам, *дорогой Владимир Леонтье-*

*вич*, что наше первое общее собрание единодушно избрало Вас, крупнейшего советского ученого, продолжателя замечательных традиций Мечникова и Сеченова, Яблочкова и Тимирязева, Карпинского и Павлова, почетным членом Академии наук Армянской Советской Социалистической Республики.

Примите, *Владимир Леонтьевич*, нашу сердечную и глубокую благодарность. Желаем Вам многие годы плодотворной работы на благо нашей Советской родины, на процветание передовой советской науки.

Принято на торжественном заседании, посвященном открытию Академии наук Армянской ССР, 29 ноября 1943 г.